

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 115/10

Քաղ. Երևան

31 մայիսի 2010թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա.Վ.Բաբայան, Ա.Գ. Շահինյան եւ Ա.Ի.Ղարիբջանյան (քարտուղար), իր 2010թ. մայիսի 31-ի նիստում (արձանագրություն N80/3) քննարկեց «Օրինջ Բրենդ Սերվիսիզ Լիմիթիդ» ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Է. Նահապետյանի 2010թ. ապրիլի 1-ի «ORANGE MOBILE» (գրանցման համար՝ N12146) ապրանքային նշանի գրանցման գործողությունն անվավեր ճանաչելու վերաբերյալ բողոքը:

Բողոքում ներկայացված է, որ «Քալրֆուլ Մոբայլ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը 2007թ. սեպտեմբերի 2-ին ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալություն «ORANGE MOBILE» ապրանքային նշանի հայտ է ներկայացրել, ինչը և գրանցվել է 2007թ. հոկտեմբերի 18-ին՝ ստանալով 12146 գրանցման համարը ապրանքների ու ծառայությունների միջազգային դասակարգման (այսուհետ՝ ԱՇՄԴ) 35 դասի «առևտուր» ծառայության համար:

2010թ. մարտի 1-ին «Քալրֆուլ Մոբայլ» ընկերությունը Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան հայց է ներկայացրել ընդդեմ «Օրանժ Արմենիա» ՓԲԸ «ORANGE» ապրանքային նշանի ապօրինի օգտագործումը դադարեցնելու պահանջի մասին, քանի որ ինքն ունի «ORANGE MOBILE» ապրանքային նշանի օգտագործման բացառիկ իրավունք:

«Օրինջ Բրենդ Սերվիսիզ Լիմիթիդ» ընկերությունը գտնում է, որ «Քալրֆուլ Մոբայլ» ընկերությանը պատկանող N 12146 գրանցմամբ «ORANGE MOBILE» ապրանքային նշանը ՀՀ

մտավոր սեփականության գործակալության կողմից գրանցվել է օրենքի խախտումով և պետք է անվավեր ճանաչվի:

Բողոքում ներկայացված են «Օրինջ Բրենդ Սերվիսիզ Լիմիթիդ» ընկերության անունով ՀՀ տարածքում իրավական պահպանություն ստացած ապրանքային նշանները՝

ա) 09.05.2001թ. առաջնությամբ N790992 «ORANGE» միջազգային գրանցումը,

բ) 31.03.1998թ առաջնությամբ N 4562 «ORANGE» (համակցված) ազգային գրանցումը,

գ) 31.03.1998թ առաջնությամբ N 4563 «ORANGE» (բառային) ազգային գրանցումը:

Նշված է, որ «Քալրֆուլ Մոբայլ» ընկերությանը պատկանող N 12146 «ORANGE MOBILE» ապրանքային նշանը ԱՕՄԴ 35 դասի «առևտուր» ծառայությունների համար գրանցված է 09.02.2007թ. առաջնությամբ:

Ստորև ներկայացված են բողոքում բերված իրավական հիմքերը, որոնցից էլ բխում են բողոքարկողի հիմնավորումները.

-ՀՀ Սահմանադրությունը,

-ՀՀ Քաղաքացիական օրենսգիրքը,

-Արդյունաբերական սեփականության պահպանության մասին Փարիզյան Կոնվենցիան կնքված 1883թ. բոլոր հետագա փոփոխություններով, գործում է Հայաստանի Հանրապետության նկատմամբ 1991թ. դեկտեմբերի 25-ից.

-Նշանների միջազգային գրանցման մասին Մադրիդյան Համաձայնագիրը կնքված 1891թ. բոլոր հետագա փոփոխություններով, գործում է Հայաստանի Հանրապետության նկատմամբ 1991թ. դեկտեմբերի 25-ից և Մադրիդյան Համաձայնագրին կից Արձանագրությունը ընդունված 28.06.1989թ.

-Առևտրի Համաշխարհային Կազմակերպության շրջանակներում գործող մտավոր սեփականության իրավունքների առևտրին առնչվող հայեցակետերի մասին համաձայնագիրը (TRIPS),

-«Ապրանքային և սպասարկման նշանների և ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքը , ՀՕ-41 ընդունված 20.03.2000թ. (այսուհետ «Օրենք»)

-«Ապրանքային և սպասարկման նշանների, հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման Կարգը» հաստատված ՀՀ Էկոնոմիկայի նախարարության 12.04.2005թ. N 85-Ն հրամանով (այսուհետ «Կարգ»):

«Օրինջ Բրենդ Սերվիսիզ Լիմիթիդ» ընկերության միջազգային N IR 790992 «ORANGE» բառային ապրանքային նշանի գրանցումը ունի 09.05.2001թ. առաջնությունը, N4562

«ORANGE» (համակցված) և N 4563 «ORANGE» (բառային) ապրանքային նշանները գրանցված են 31.03.1998թ առաջնությանը, մինչդեռ «Քալրֆուլ Մոբայլ» ընկերության N 12146 «ORANGE MOBILE» ապրանքային նշանը գրանցված է 09.02.2007թ. առաջնությանը:

Համաձայն Մադրիդյան Համաձայնագրի և դրան կից արձանագրության, ինչպես նաև Օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասի «Ապրանքային նշանի առաջնությունը սահմանվում է միջազգային գրանցում ունեցող ապրանքային նշանի առաջնության թվականով»:

Տվյալ դեպքում IR 790992 միջազգային գրանցմամբ "ORANGE" ապրանքային նշանի առաջնությունը սահմանվել է 09.05.2001թ.:

Բողոքարկողը գտնում է, որ ՀՀ մտավոր սեփականության գործակալությունը, գրանցելով N 12146 «ORANGE MOBILE» ապրանքային նշանը, խախտել է Օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «ա» եւ «բ» ենթակետերը, համաձայն որոնց՝

«որպես ապրանքային նշան չեն կարող գրանցվել այն նշանները, որոնք նույնական կամ շփոթելու աստիճան նման են՝

ա) նույն կամ նույնատիպ ապրանքների համար Հայաստանի Հանրապետությունում այլ անձի անունով արդեն գրանցված կամ գրանցման ներկայացված (եթե դրանց հայտերը հետ կանչված կամ մերժված չեն) ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանին,

բ) Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան, նույն կամ նույնատիպ ապրանքների համար առանց գրանցման ավելի վաղ առաջնությամբ՝ այլ անձանց ապրանքային նշաններին»:

Ընդհանուր վերլուծության արդյունքում բողոքարկողը գտնում է, որ «ORANGE MOBILE» ապրանքային նշանի հիմնական ընկալման բառային տարբերակող տարրը «ORANGE» բառն է, իսկ «MOBILE» բառը հանդիսանում է թույլ և նկարագրական տարր և ինքնուրույն պահպանության ենթական չէ: Այսպիսով, N 12146 «ORANGE MOBILE» ապրանքային նշանի գերիշխող և տարբերակող «ORANGE» բառը նույնական է և կրկնում է N 4562, N 4563, N790992 «ORANGE» ապրանքային նշանները, ինչի հետևանքով «ORANGE MOBILE» ապրանքային նշանի գրանցումը պետք է մերժվեր փորձաքննության կողմից:

Բողոքարկողը գտնում է, որ մտավոր սեփականության իրավունքների առևտրին առնչվող հայեցակետերի մասին Համաձայնագրի (TRIPS) 16-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝

«1. Գրանցված ապրանքային նշանի սեփականատերը բացառիկ իրավունք ունի սեփականատիրոջ համաձայնությունը չունեցող բոլոր երրորդ կողմերին արգելել առևտրի

ընթացքում նույնական կամ համանման նշաններ օգտագործել այն ապրանքների կամ ծառայությունների նկատմամբ, որոնք նույնական կամ համանման են նրանց, որոնց նկատմամբ ապրանքային նշանը գրանցված է, եթե այդ օգտագործման հետևանքով շփոթության հավանականություն կստեղծվի:

Իսկ Կարգի 106 կետի համաձայն՝

«Ապրանքների նմանատիպությունը որոշելիս պարզվում է, որ նույն կամ շփոթելու աստիճան նման նշաններով դրանց վաճառքի ժամանակ նույն անձի (արտադրողի) կողմից թողարկվելու հարցում սպառողի մոտ պատկերացում առաջացնելու սկզբունքային հնարավորությունը»:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 19 հոդվածով, TRIPS-ի 16-րդ հոդվածով, ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 1171 (1.2), 1172 (1,2), 1173 հոդվածներով, «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների» ՀՀ օրենքի 2, 4, 7, (1,5), 12(1-ա, բ), 28 (1ա) հոդվածներով, «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման Կարգի» 92, 93 (1, 2, 6 (ա,բ)), 105, 105', 106 կետերով, Բողոքարկման Խորհրդի Կանոնադրության 2,4 (1,2), 5(2) կետերով և Բողոքարկման Խորհուրդ բողոքների և դիմու մների ներկայացման և քննարկման Կարգի 2 (12) կետով ամրագրված նորմերով՝ բողոքարկողը խնդրում է անվավեր ճանաչել «Քալրֆուլ Մոբայլ» ԱՊԸ-ին պատկանող N 12146 գրանցմամբ «ORANGE MOBILE» ապրանքային նշանի պետական գրանցումը:

Ի պատասխան մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդի 2010թ. ապրիլի 2-ի «Քալրֆուլ Մոբայլ» ԱՊԸ-ին ուղարկված ծանուցագրի, 2010 թվականի ապրիլի 27-ին ստացվել է առարկություն: Ժամանակի սղության պատճառով ստացված նյութերը չեն ուսումնասիրվել եւ ապրիլի 28-ի բողոքարկման խորհրդի նիստում «ORANGE MOBILE» ապրանքային նշանի անվավեր ճանաչման գործի քննարկումը հետաձգվել է:

«Քալրֆուլ Մոբայլ» ընկերության առարկության մեջ ներկայացված են ընկերության ստեղծման եւ գործունեության նկարագիրը եւ փաստեր, համաձայն որոնց բողոքը ենթակա է մերժման:

«ORANGE MOBILE» ապրանքային նշանի սեփականատերը հայտնում է, որ օգտագործելով հիշյալ ապրանքային նշանը բջջային հեռախոսների և օժանդակ պարագաների վաճառք իրականացնելիս, շուկայում սպառողների լայն շրջանակին հայտնի է դարձել:

2009թ. նոյեմբերի 5-ից «Օրանժ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերությունը, որպես Հայաստանի բջջային կապի երրորդ օպերատոր մուտք է գործել հայկական շուկա: 2009թ. նոյեմբերի 5-ից «Օրանժ Արմենիա» ՓԲԸ-ն իրականացնում է նաև առևտրային գործունեություն, այդ թվում՝ բջջային հեռախոսների և օժանդակ պարագաների վաճառքի հետ կապված:

«Քալրֆուլ Մոբայլ» ՍՊ ընկերությունը նշում է, որ բողոքարկողի կողմից որևէ ապացույց չի ներկայացվել թիվ 12146 գրանցման համարն ունեցող ապրանքային նշանի և թիվ 4562, 4563 գրանցման համարներն ու թիվ 790992 միջազգային գրանցման համարն ունեցող ապրանքային նշանների միջև նույնականության կամ շփոթելու աստիճան նմանության վերաբերյալ:

09.04.2010թ. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանը վարույթ է ընդունել «Օրանժ Արմենիա» ՓԲ ընկերության հակընդեմ հայցն ընդդեմ «Քալրֆուլ Մոբայլ» ՍՊ ընկերության պատկանող 12146 գրանցմամբ «ORANGE MOBILE» ապրանքային նշանի ապօրինի օգտագործումը դադարեցնելու և այն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

«Քալրֆուլ Մոբայլ» ՍՊ ընկերությունը գտնում է, որ ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա է մերժման՝ հիմք ընդունելով ՀՀ օրենսդրության հետևյալ դրույթները՝

- ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1171 հոդվածի առաջին մասը,

- «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի առաջին մասը,

- «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» 84 կետի 8-րդ ենթակետը,

- «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 24 կետը,

- «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդի կանոնադրության» 4 կետի առաջին ենթակետը,

- «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ հոդվածի երրորդ մասը.

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 8, 18 հոդվածները և «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 36, 47, 51 60 կետերը՝ «Քալրֆուլ Մոբայլ» ՍՊ ընկերությունը իր գրության մեջ խնդրում է.

- Սույն վարչական վարույթը կարճել,
- Սույն վարչական վարույթը չկարճելու դեպքում բողոքարկողի պահանջը մերժել:

Ներկայացված առարկության մասին կոլեգիան պարզաբանեց, որ «Քալրֆուլ Մոբայլ» ՍՊ ընկերությունը իր առարկության մեջ նշել էր, որ նույն պահանջով դատական հայց է ներկայացվել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան եւ խնդրում էր, որ սույն գործի դատական վարույթը կարճվի: Սակայն, գործակալությունը պաշտոնապես չի ճանաչվել պատասխանող այդ գործով եւ առ այսօր որեւէ պաշտոնական ծանուցում չի ստացել դատարանից, հետեւաբար այդ հանգամանքը չի կարող հաշվի առնվել վարչական վարույթը կարճելու համար:

Այնուհետեւ, ներկայացվեց կոլեգիայի քննարկման արդյունքները այն մասին, որ «Օրինջ Բրենդ Սերվիսիզ Լիմիթիդ» ընկերությունն ունի իր անունով գրանցված IR 790992 ապրանքային նշանը, որն ունի ավելի վաղ առաջնություն քան «Քալրֆուլ Մոբայլ» ՍՊ ընկերության կողմից գրանցված նշանը: Սակայն, բողոքարկողի այն պնդմանը, որ «Ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների» բաժինը փորձաքննության ընթացքում հաշվի չի առել N 12146 «ORANGE MOBILE» գրանցումը, կոլեգիան համաձայնվել չի կարող, քանի որ բաժինը փորձաքննության ժամանակ ի հայտ է բերել վերոհիշյալ ապրանքային նշանը եւ գտել, որ այդ երկու ապրանքային նշանները շփոթելու աստիճան նման չեն, քանի որ նախ՝ «ORANGE MOBILE» ապրանքային նշանը համակցված է եւ բաղկացած է բառային եւ պատկերային տարրերից: Ընդ որում թ'ե բառային, եւ թ'ե պատկերային տարրերն իրականացված են յուրահատուկ գունային համադրությամբ եւ յուրահատուկ ոճավորմամբ: Փորձաքննության բաժինը փորձաքննության ժամանակ հաշվի է առել նաեւ այն, որ «ORANGE» բառի օգտագործմամբ կան մի շարք ապրանքային նշանների գրանցումներ տարբեր սեփականատերերի կողմից (IR811457 ORANGE TORRES, N14085 ORANGE TENNIS)եւ դրանք որեւէ խնդիր չեն առաջացնում այդ նշանների օգտագործման առումով: Հետեւաբար, սպառողը չի շփոթի սպասարկման համար օգտագործվող այս նշանները, որպես մեկ սուբյեկտին պատկանող: Անհրաժեշտ է հաշվի առնել նաեւ, որ այսօր

«Օրինջ Բրենդ Սերվիսիզ Լիմիթիդ» ընկերության կողմից սպասարկման կետերում օգտագործվող «ORANGE» նշանը, նույնպես, ունի յուրահատուկ ոճավորում իր գունային համակցությամբ եւ քաջ հայտնի է սպառողին:

Երկու ապրանքային նշանների նմանության աստիճանը որոշելու նպատակով, կոլեգիան առաջնորդվելով Կարգի 96-101 –րդ եւ 105-105¹–րդ կետերով պարզել է, որ՝

1. համեմատելով ապրանքային նշանների բառային տարրերը չունեն ձայնային նմանություն, քանի որ դրանք հնչում են որպես «Օրանժ» եւ «Օրանժ մոբայլ» (կարգի 98-րդ կետ) եւ չնայած դրանց մեջ ընդհանուր է «ORANGE» բառը, այնուամենայնիվ դա բավարար չէ շփոթություն առաջացնելու համար,
2. Գրաֆիկական նմանությունը ընդհանրապես բացակայում է, քանի որ բացակայում են Կարգի 99-րդ կետի բոլոր ենթակետերում նշված հատկանիշները,
3. Իմաստային նմանությամբ եւս տարբերվում են, քանի որ «ORANGE»-ը թարգմանաբար նշանակում է նարինջ, իսկ «ORANGE MOBILE»-ը թարգմանաբար նշանակում է «շարժական նարինջ»,

Բացի վերը նշվածից, համեմատության համար կարելու էր դերակատարություն ունի «ORANGE MOBILE» ապրանքային նշանի պատկերային տարրի կարգավորման առանձնահատկությունները, ինչը որեւէ կերպ համեմատելի չէ «ORANGE» ապրանքային նշանի հետ:

Այս կապակցությամբ կոլեգիան գտնում է, որ «Օրինջ Բրենդ Սերվիսիզ Լիմիթիդ» ընկերության «ORANGE» եւ «Քալրֆուլ Մոբայլ» ՍՊ ընկերության կողմից գրանցված «ORANGE MOBILE» ապրանքային նշանները շփոթելու աստիճան նման չեն:

Ինչ վերաբերում է բողոքարկողի այն փաստարկին, որ «Քալրֆուլ Մոբայլ» ՍՊ ընկերության կողմից դատական հայց է ներկայացվել «Օրանժ Արմենիա» ՓԲ ընկերության դեմ, պահանջելով ապրանքային նշանի ապօրինի օգտագործումը դադարեցնել, քանի որ ընկերությունը ունի «ORANGE MOBILE» ապրանքային նշանի օգտագործման բացառիկ իրավունք, կցանկանայինք նշել, որ «Օրինջ Բրենդ Սերվիսիզ Լիմիթիդ» ընկերության IR 790992 գրանցված ապրանքային նշանը ունի ավելի վաղ առաջնություն եւ եթե «ORANGE MOBILE» ապրանքային նշանի փորձաքննության ժամանակ գործակալությունը գտներ, որ շփոթելու աստիճան նման են, ապա «Քալրֆուլ Մոբայլ» ՍՊ ընկերության ապրանքային նշանի գրանցումը կմերժվեր՝ հիմք ընդունելով IR 790992 գրանցումը:

Ելնելով վերը նշվածից՝ բողոքարկողի կողմից Օրենքի 12-րդ հոդվածի 1, 2 կետերը, TRIPS–ի համաձայնագրի 16 հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերը եւ մյուս օրենսդրական հիմքերը, որոնք բերված էին եւ առնչվում էին նշանների շփոթելու աստիճան նման լինելուն տվյալ դեպքում կիրառելի չեն:

Հիմք ընդունելով վերոգրյալը եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի 74-րդ կետի 2-րդ ենթակետով՝ բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել «ORANGE MOBILE» (գրանցման համար՝ 12146) համակցված ապրանքային նշանի գրանցումը անվավեր ճանաչելու մասին «Օրինջ Բրենդ Սերվիսիզ Լիմիթիդ» ընկերության ներկայացուցիչ ՀՀ արտոնագրային հավատարմատար Է. Նահապետյանի 2010թ. ապրիլի 1-ի բողոքը եւ «Քալրֆուլ Մոբայլ» ՍՊ ընկերության «ORANGE MOBILE» (գրանցման համար՝ 12146) համակցված ապրանքային նշանի գրանցումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշմանը չհամաձայնելու դեպքում հայտատուն իրավունք ունի որոշումն ստանալու օրվանից վեցամսյա ժամկետում դիմել դատարան:

Բողոքարկման խորհրդի
նախագահ

Ա.Ազիզյան